ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի աճուրդի կազմակերպիչը հայտարարում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բաց դասական աճուրդ:

Լոտ 1 – «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Հարթագյուղ 8-րդ փողոց 14 հողամաս» հասցեում գտնվող, 06-061-0064-0002 կադաստրային ծածկագրով 0,10068 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Հողամասը գտնվում է Հարթագյուղ բնակավայրում, հարևանությամբ առկա են գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 428 594,76 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 214 297,38 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 21 429,738 ՀՀ դրամ:

Լոտ 2 – «Մարզ Լոռի, համայնք Լեռնանցք 4-րդ փողոց 6/2 հողամաս» հասցեում գտնվող, 06-040-0012-0003 կադաստրային ծածկագրով 0,12708 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Հողամասը գտնվում է Լեռնանցք բնակավայրում, հարևանությամբ առկա են գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 855 502,56 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 427 751,28 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 42 775,128 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող 06-006-0260-0053 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,17441 հեկտար մակերեսով 4-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

Հողամասը գտնվում է Սպիտակ համայնքի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 357 540,5 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 178 770,25 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 17 877,025 ՀՀ դրամ:

Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 207 սենյակ):

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ 2025 թ. մարտի 26-ին:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են անձնագիր և աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր 10 000 ՀՀ դրամի չափով՝ վճարված Սպիտակի համայնքապետարանի 900245161410 հաշվեհամարին:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2025 թ. մարտի 26-ը:

Աճուրդը կայանալու է 2025 թ. մարտի 31-ին ժամը 11.00-ին, Սպիտակի համայնքապետարանում (Շահումյան 7, 3-րդ հարկ, 310 սենյակ):

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: